Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացած՝ 10-ը հուլիսի 2018 թվական **քաղաք Գյումրի**

2018 թվականի հուլիսի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՀՀ Շիրակի մարզի խորհրդի հերթական նիստը:

ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքների ղեկավարներից նիստին մասնակցում էին՝ 38-ը:

Բենիամին, Գետափ, Պեմզաշեն և Արփի համայնքների ղեկավարները բացակայում էին՝ արձակուրդում գտնվելու պատճառով:

Մարզի խորհրդի նիստը վարում էր՝ ՀՀ Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանը:

Մարզի խորհրդի նիստին հրավիրված էին՝

- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Սևան Քոչարյանը,
- ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարար վարչության պետի տեղակալ, ՓԾ փոխգնդապետ Կարեն Եղշատյանը,
- «Շիրակ» ՋՕԸ-ի տնօրեն Ռուստամ Գրիգորյանը:

Մարզի խորհրդի նիստին մասնակցում էին նաև՝

- մարզպետի տեղակալները, խորհրդականը, օգնականները,
- մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների պետերը,
- զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ:

Մինչ նիստի օրակարգի հարցերին անցնելը, մարզպետը համայնքների ղեկավարներին ներկայացրեց ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության նորանշանակ պետ, ոստիկանության գնդապետ Սևան Քոչարյանին, մարզպետի տեղակալներ Վարդան Գրիգորյանին, Արա Մելիքջանյանին և Սոֆյա Հովսեփյանին:

Մարզպետը ներկայացրեց մարզի խորհրդի նիստի օրակարգի նախագիծը՝

1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2018 թվականի վեց ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

2. Մարզում ոռոգման կազմակերպման և բերքահավաքի նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

3. 2017-2018 ուս. տարվա ամփոփման և 2018-2019 ուս. տարվա նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Հրայր Կարապետյան

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չեղան, օրակարգը հաստատվեց:

Այնուհետև անցան օրակարգային հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ 1. Մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2018 թվականի վեց ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ՝ Լիպարիտ Մարտիրոսյան

(Զեկուցագիրը կցվում է):

Մարզպետն անընդունելի համարեց մարզի որոշ համայնքների ղեկավարների կողմից 2018 թվականի վեց ամիսներին սեփական եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշները:

Մասնավորապես նշվեցին սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշներ ունեցող՝ Սպանդարյան, Սարատակ, Գեղանիստ, Սարապատ, Գետք, Բենիամին, Գետափ, Աշոցք համայնքները: Նշված համայնքների ղեկավարների կողմից ներկայացվեցին պատճառաբանություններ, մասնավորապես՝ հողի հարկի և գույքահարկի զիջումների ակնկալիքով պայմանավորված բնակչության կողմից վճարումներ չկատարելը, վերջիններիս սոցիալական վատ պայմանները և այլն: Սակայն մարզպետը նշեց, որ կառավարության կողմից զիջումներ նախատեսված չեն և առաջարկեց ներկա լրատվամիջոցներին նշված տեղեկատվությունը տարածել, որպեսզի ազգաբնակչությունը տեղեկացված լինի և շարունակի հարկերը վճարել:

Համայնքների ղեկավարների արդարացումները մարզպետը համարեց չհիմնավորված, նշելով, որ մարզի բոլոր համայնքներում էլ կան թվարկված խնդիրները, սակայն այլ համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները դրական են: Խնդիրն աշխատանքների ճիշտ և արդյունավետ կազմակերպման մեջ է:

Մարզպետը կարևորելով համայնքների սեփական եկամուտների ժամանակին ու պարտաճանաչ կատարումը՝ փաստեց, որ միայն հարկերի հավաքագրմամբ հնարավոր կլինի լուծել համայնքների առջև ծառացած բազմաթիվ խնդիրներ, ուստի հորդորեց համայնքների ղեկավարներին իրենց պարտավորությունների կատարման մեջ չթերանալ, լինել հետևողական՝ առաջարկելով մեկամսյա ժամկետում թերացումները վերացնել և աշխատանքներ տանել ցուցանիշները բարելավելու ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ 2. Մարզում ոռոգման կազմակերպման և բերքահավաքի նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

(Զեկուցագիրը կցվում է):

Մարզպետն անդրադարձավ համայնքներում ոռոգման ջրի ուշացումների հետ կապված բնակիչների դժգոհություններին և ձայն տվեց մարզի «Շիրակ» ջրօգտագործողների ընկերության տնօրեն Ռուստամ Գրիգորյանին:

Վերջինս տեղեկացրեց, որ ներկայումս համայնքներում ոռոգման ջուրը բաշխվում է ըստ հերթականության, սակայն որոշ համայնքներում (օրինակ՝ Սպանդարյան, Մեղրաշեն, Սարալանջ) կա ջրի բաշխում իրականացնող աշխատողների կարիք, քանի որ ցածր աշխատավարձի պատճառով աշխատելու ցանկություն հայտնողներ չկան: Բացի այդ, մարզի մի շարք համայնքներին ոռոգման ջուր չի հասնում ոռոգման հին ու մաշված ցանցի և ջրակորուստների պատճառներով:

Մարզպետը խնդիրների արագ ու օբյեկտիվ լուծումը կարևորելով՝ ընդգծեց, որ դրանց առնչվող բոլոր պատասխանատուները պետք է հետևողական լինեն և ամենօրյա աշխատանքներ տանելով բացառեն բոլոր թերացումներն ու խախտումները:

Մարզպետը միաժամանակ անդրադարձավ մարզի որոշ համայնքներում բնակիչների կողմից այս կամ այն հարցերի վերաբերյալ դժգոհություններին, որոնք ուղեկցվում են ճանապարհներ փակելով: Նշվածը որակեց հիմնականում համայնքների ղեկավարների անգործության հետևանք և ավելացրեց, որ նմանատիպ դեպքերը չեն կրկնվի, եթե համայնքի ղեկավարը տեղեկացված լինի համայնքի բոլոր խնդիրներին, առկա դժգոհությունների պատճառներին և համապատասխան աշխատանքներ տանի այդ ուղղությամբ:

Հարցերի առնչությամբ մարզպետի տեղակալ Սոֆիա Հովսեփյանն հայտնեց իր մտահոգությունները՝ անդրադառնալով ոռոգման ջրի հետ կապված խնդիրներին և նշեց, որ բնակիչների հետ ջրօգտագործման պայմանագրերի կնքումը կատարվում է ոչ պատշաճ ու մինչ օրս որոշ համայնքներում ոռոգման պայմանագրերը դեռևս կնքված չեն: Անհրաժեշտ համարեց դրանք կնքել ցանքի հետ զուգահեռ, ավելացնելով, որ դժգոհությունները

հիմնականում կապված են ջրի ոչ ճիշտ բաշխման հետ, ուստի համայնքների ղեկավարները մշտապես պետք է աջակցեն, այլ ոչ թե խոչընդոտեն գործընթացին:

«Շիրակ» ՋՕԸ-ի տնօրեն Ռուստամ Գրիգորյանը տեղեկացրեց, որ բնակիչները պայմանագրեր կնքելու համաձայնություն տալիս են միայն այն ժամանակ, երբ ոռոգման ջուրը գյուղ է մտնում:

Նշվածի առնչությամբ մարզպետը հայտնեց, որ կան տեղեկություններ, որ որոշակի գումարի դիմաց, ջրի բաշխում իրականացնող աշխատողները ոռոգման ջուր են բաց թողնում, որի հաշվին մյուս համայնքներին մատակարարվելիք ջրի ծավալը նվազում է: Նա հորդորեց համայնքների ղեկավարներին՝ լինել ուշադիր, նմանատիպ դեպքեր թույլ չտալու համար:

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Սևան Քոչարյանը հարցի առնչությամբ նշեց, որ ոռոգման ջրի ոչ ճիշտ բաշխման և համայնքներում ճանապարհների փակման դեպքերը համայնքներում կբացառվեն, եթե համայնքների ղեկավարների կողմից հետևողական աշխատանքներ տարվեն: Միաժամանակ հայտնեց, որ ոստիկանությունն իր աշխատանքով աջակցում է բոլոր գործընթացներին:

Զեկուցողի կողմից տեղեկացվեց նաև, որ մարզում լուծում պահանջող բոլոր խնդիրները, որոնց թվում են նաև մարզի ջրամբարների, ջրի բաժանարարների և այլ խնդիրներ, մարզպետի կողմից ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

ԼՍԵՑԻՆ 3. 2017-2018 ուս. տարվա ամփոփման և 2018-2019 ուս. տարվա նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ Հրայր Կարապետյան

Ամփոփելով 2017-2018 ուսումնական տարին և խոսելով 2018-2019 ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների մասին, զեկուցողը տեղեկացրեց, որ առաջիկա ուսումնական տարում մարզում աշակերտների թվաքանակի աճ է սպասվում՝ շուրջ 1500-ով, որը պայմանավորված է լինելու ինչպես առաջին դասարանցիների ընդունելության ավելացումով, այնպես էլ ավարտական դասարանների նվազմամբ: Մարզում գործող 62 դպրոցահեն նախակրթարաններում ևս երեխաների թվաքանակի ավելացում է կանխատեսվում: Ինչպես նախորդ տարիներին, այս ուսումնական տարում ևս մարզի դպրոցականները աչքի են ընկել հանրապետական օլիմպիադաներում՝ վաստակելով 46 մրցանակ:

Համայնքների ղեկավարների կողմից ընդգծվեցին դպրոցների շենքերի անբավարար պայմանները, մասնավորապես՝ Ամասիա համայնքի ղեկավարը հարց բարձրացրեց Հովտուն բնակավայրի դպրոցի շենքի անմխիթար վիճակի վերաբերյալ, որին ի պատասխան մարզպետը տեղեկացրեց, որ կազմվել և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման

նախարարություն է ներկայացվել լուծում պահանջող խնդիրներ ունեցող մարզի բոլոր շենք-շինությունների ցանկը:

Մարզպետի տեղակալ Սոֆիա Հովսեփյանն ավելացրեց, որ համայնքների նախակրթարաններում կադրերի ընտրությունը կատարվում է ոչ մասնագիտորեն, այլ անձնական նկատառումներով, որոնք բազմաթիվ դժգոհությունների առիթ են դարձել: Մասնավորապես անդրադարձավ նաև այն նախակրթարաններին, որոնք նույնիսկ չունեն համապատասխան լիցենզիաներ:

Նիստի ավարտին հայտարարություններով հանդես եկավ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարար վարչության պետի տեղակալ, ՓԾ փոխգնդապետ Կարեն Եղշատյանը.

1. Քանի որ մարզի տարածքում առկա ջրային տարածքները հարմարեցված չեն լողալու համար, ուստի այդ տարածքներում փրկարարական կետեր նախատեսված չեն: Հաշվի առնելով նշված հանգամանքը, առաջարկվեց համայնքների ղեկավարներին համայնքներում առկա ջրային տարածքների մոտակայքում լողալը արգելող, նախազգուշացնող ցուցանակներ տեղադրել՝ դժբախտ դեպքերից խուսափելու համար: Ինչպես նաև առաջարկվեց առաջնորդվել ՀՀ Շիրակի մարզպետի 04.07.2018թ. «ՀՀ Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» թիվ 160-Ա որոշմամբ տրված հանձնարարականներով:

2. Առաջարկվեց համայնքների ղեկավարներին չթույլատրել համայնքների տարածքում բնակիչների կողմից չհսկվող այրումներ կատարելը, քանի որ ամառային շոգ եղանակային պայմաններում դրանք կարող են աղետի վերածվել, իսկ ՀՀ ԱԻՆ աշխատակազմի փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարար վարչությունը չունի համապատասխան քանակի հաշվարկ մեքենաներ՝ տարբեր համայնքներում հրդեհների միաժամանակ բռնկման դեպքերում արագ արձագանքելու համար:

Ամփոփելով մարզի խորհրդի նիստի ընթացքում քննարկված հարցերը՝ ՀՀ Շիրակի մարզպետ Կարեն Սարուխանյանը կոչ արեց համայնքների ղեկավարներին թափանցիկ ու աչալուրջ աշխատել՝ նշելով, որ միայն համատեղ ու հոգատար աշխատանքով է հնարավոր դրական տեղաշարժ արձանագրել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ **ԿԱՐԵՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Տաթևիկ Առաքելյանը

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր - 1

ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2018 թվականի վեց ամիսների կատարման մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Լիպարիտ Մարտիրոսյան

2018թվականի հուլիսի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 80.5%-ով, նախատեսված 1,165,573.1 հազ. դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 938,789.6 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 226,783.5 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2018 թվականի բյուջեների վեց ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	**2018թ. նախատեսված սեփական եկամուտներ**	**Փաստացի կատարողական**	**Շեղում /+,-/**	**Կատ. %**
Հողի հարկ	158,675.7	125,308.0	- 33,367.7	79.0
Գույքահարկ	417,744.0	306,754.5	- 110,989.4	73.4
Պետական տուրք	24,219.0	22,644.4	- 1,574.6	93.5
Տեղական տուրք	67,069.6	62,937.6	- 4,132.0	93.8
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	176,931.9	128,701.7	- 48,230.2	72.7
ա/ հողի վարձավճար	146,894.4	104,555.2	- 42,339.1	71.2
բ/ գույքի վարձավճար	30,037.5	24,146.4	- 5,891.1	80.4
Այլ եկամուտներ	320,933.0	292,443.6	- 28,489.4	91.1
Ընդամենը սեփական եկամուտներ	1,165,573.1	938,789.6	- 226,783.5	80.5

2018թվականի վեց ամիսների փաստացի հավաքագրվածի աճի տոկոսը 2017թվականի համեմատությամբ կազմում է 21.5% կամ ավել է հավաքագրվել 166,078.7 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

Հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2018թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	Կատ. %
1	Անի	62,850.0	51,242.6	- 11,607.4	81.5
2	Ամասիա այդ թվում՝	40,921.7	34,951.0	- 5,970.7	85.4
2.1	Ամասիա	19,789.3	19,341.0	- 448.3	97.7
2.2	Արփի	21,132.4	15,610.0	- 5,522.4	73.9
3	Արթիկ	171,793.9	141,270.4	- 30,523.5	82.2
4	Ախուրյան այդ թվում՝	189,863.9	131,276.1	- 58,587.8	69.1
4.1	Ախուրյան	95,360.0	57,626.3	- 37,733.7	60.4
4.2	Մարմաշեն	30,228.7	24,449.3	- 5,779.4	80.9
5	Աշոցք այդ թվում՝	51,491.2	29,058.8	- 22,432.4	56.4
5.1	Աշոցք	31,291.2	18,842.9	- 12,448.3	60.2
5.2	Սարապատ	20,200.0	10,215.9	- 9,984.1	50.6

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2018թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Աշոցքի տարածաշրջանում՝ 56.4%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 67.6% կամ նվազման տոկոսը կազմում է 11.2, գումարային նվազումը կազմել է 1,812.6 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2018թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 84.9%, **Արթիկ** քաղաքը՝ 85.5%:

Մարզի թվով 23 համայնքներ չեն ապահովել 2018թ. վեց ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 80.5%-ը, այդ թվում թվով 2 համայնքներ չեն ապահովել սեփական եկամուտների կատարման՝ նույնիսկ 50.0 %-ի ցուցանիշը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2018 թվականին վեց ամիսներին նախատեսված 2,212,409.1 հազ. դրամ <<Դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է:

Զ Ե Կ ՈՒ Ց Ա Գ Ի Ր - 2

ՀՀ Շիրակի մարզում ոռոգման կազմակերպման և բերքահավաքի նախապատրաստական աշխատանքների մասին

Զեկուցող՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ՝ Մովսես Մանուկյան

2018 թվականի ոռոգման սեզոնի սկիզբը արձանագրվեց հունիսի 25-ից, մինչ այդ մարզի տարածաշրջաններում տեղումների քանակը միջինից բարձր էր, նախորդ տարիների հետ համեմատած 2018 թվականի գարնանը աշնանացան ցորենի ցանքատարածությունները գրեթե չոռոգվեցին, երբ ամեն տարի շուրջ 2000 հա աշնանացան ցորենի ցանքեր էր ոռոգվում, մարզի բոլոր տարածաշրջաններում հացահատիկի ցանքերը գտնվում են լավ վիճակում, միայն բնական աղետները կարող են խանգարել հացահատիկից բարձր բերք չստանալուն:

Հացահատիկի ցանքերը այնքան բարձր են, հասկերը հզոր, որ անգամ միջին ուժեղությամբ քամու դեպքում կարող են վնասներ կրել, նման դեպքեր դիտարկվել են մարզի Ախուրյան, Ազատան, Առափի, Հոռոմ, Գուսանգյուղ և մի շարք այլ համայնքներում:

Չնայած նրան, որ հացահատիկի ցանքերի ոռոգման համար նախատեսված ջրային պաշարները խնայվեցին, այնուամենայնիվ մարզի որոշ տարածքներում ոռոգման ջրի մատակարարումը իրականացվեց որոշ ուշացումով, հիմնականում Այգաբացի ջրանցքի վրա՝ Արևիկ, Այգաբաց և Ազատան բնակավայրերի ջրօգտագործողների համար, որի պատճառը հանդիսանում էր ինչպես ինտենսիվ տեղումների պատճառով մաքրման աշխատանքների ձգձգումը, այնպես էլ բնակավայրերի ջրօգտագործողների կողմից միաժամանակյա ջրի պահանջարկը:

Վերոնշյալ հարցը գտնվում է մեր և Շիրակ ՋՕԸ-ի ամենօրյա հսկողության ներքո, արվում է մաքսիմումը՝ ջրի տրման ռեժիմը պահելու համար: Ներկայումս կատարվում են աշխատանքներ նաև «Սալվինազ» ջրատարի մաքրման համար, սակայն այստեղ խնդիրը բարդանում է, քանի որ ջրատարի որոշ հատված անցնում է Գյումրի քաղաքի արևելյան հատվածի սեփական տներին հարակից տարածքներով, որտեղ մաքրման աշխատանքները լրացուցիչ բարդություններ են ստեղծում: Ներկա պահին ոռոգման աշխատանքներն ընթանում են առանց ընդհատումների, խնդիրներ առաջանալու դեպքում օպերատիվ կերպով լուծումներ է տրվում:

2018թ. Շիրակ ՋՕԸ-ի կողմից իրականացվել է և պլանավորվում է իրականացնել մաքրման և վերանորոգման հետևյալ աշխատանքները.

Մաքրման աշխատանքներ				
Հ/Հ	Աշխատանքների տեղը	Չափման միավոր	Քանակ	
			Կատարված	Կատարվելիք
1	"Ախուրիկ **1**-ին" Ջ/Կ մղող խողովակ	գծմ	200	
2	"Այգաբացի ջրանցք"	գծմ	26 890	7800
3	"Աջափնյա" ջրանցք	գծմ	8 005	4500
4	"Շիրակի ջրանցք"	գծմ	56 167	1800
5	"Ջաջուռի" ջրամբարից	գծմ	3 438	
6	"Սալվինազի" ջրանցք	գծմ	11431	12000
7	"Սնուցող" ջրանցք	գծմ	17 262	
8	**25**-րդ բաժանարար	գծմ	33 026	
9	**26**-րդ բաժանարար	գծմ	26 440	15000
10	**26**-րդ բաժանարար ղոտացիոն	գծմ	51 150	35000
11	Բայանդուր **1**-ին ջ/կ սնուցող ջրանցք	գծմ	441	
12	Բայանդուր **2**-րդ ջ/կ սնուցող ջրանցք	գծմ	268	
13	Կապսի ջրանցք	գծմ	610	
14	Սելեկցիոն կայան	գծմ	7 155	

Հ/հ	**Պոմպակայանի անվանումը**	**Կատարված աշխատանքներ**	**Կատարվելիք աշխատանքներ**
1.	Ախուրիկի հ.**1** Ջ/Կ	Վերանորոգված պոմպի տեղադրում	Ջրավազանի մեծացում
		Տեխ. զննում	
2.	Ախուրիկի հ.Յ Ջ/Կ	Տեխ. զննում	Նոր ջրավազանի

3.	Ախուրիկի հ.**4** Ջ/Կ	Տեխ.զննում	
4.	Արևիկի Ջ/Կ	Տեխ.զննում	
5.	Արևշատի Ջ/Կ		Տեխ. զննում
6.	Բայանդուրի հ.**1** Ջ/Կ	Սարը կտրելով նոր սնող ջրանցքի փորում Տեխ. զենում	
7.	Բայանդուրի հ.**2** Ջ/Կ	Պահեստային պոմպի վերանորոգում Տեխ.զննում	Պոմպային ագրեգատների հիմնասյան հիմնանորոգում
8.	Բենիամինի հ.**1**	Տեխ.զննում	
9.	Բենիամինի հ.**2** Ջ/Կ	Վերանորոգված պոմպի Տեխ. զննում	
10.	Կամոյի Ջ/Կ	Էլ.վահաևի վերանորոգում Սնող մալուխի փոխարինում Տեխ.զննում	
11.	Մեղրաշեն-Արթիկի Ջ/Կ	Տեխ.զննում	
12.	Նոր Կյանքի Ջ/Կ	Տեխ.զննում	
13.	Ջրափի **I** Ջ/Կ	Վերաևորոզված պոմպի տեղադրում Պահեստային պոմպի վերանորոգում Պահեստային պոմպի էլ.շարժիչի վերանորոգում Տեխ.զննում	
14.	Ջրափի **II** Ջ/Կ	Տեխ. զննում	**2**-րդ պոմպային ագրեգատի հիմնանորոգում
15.	Սառնաղբյուրի Ջ/Կ	Բարձրավոլտ օդային անջատիչի վերանորոգում Տեխ. զննում	
16.	Վարդաքարի Ջ/Կ	Կոնտակտորի փոխարինում Տեխ. զննում	

Նորոգման աշխատանքներ				
Հ/Հ	Աշխատանքների տեղը	Չափման միավոր	Քանակ	
			Կատարված	Կատարվելիք
1	"Այգաբացի ջրանցք"	հատ	23	15
		գծմ	380	30
2	"Շիրակի ջրանցք"	հատ	24	
		գծմ	150	
3	"Կապսի ջրանցք"	գծմ		100
4	25-րդ բաժանարար	հատ	12	
5	"Այգաբացի ջրանցք"	գծմ	18	
6	Լուսակերտի համայք	գծմ		1300
7	Մեղրաշատի համայք	գծմ		100
8	**26**-րդ բաժանարար	հատ	20	
9	Կառնուտի ջրամբար	գծմ	491	
10	Սառնաղբյուրի ջրամբար	գծմ		150
11	Կառնուտի ջրամբար	հատ	1	
12	Վարդաքարի ջրամբար	հատ	18	

Ջրամբարների լցվածությունը 09.07.2018թ. դրությամբ՝

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ^3/	Լցվածությունը առ 09.07.2017թ. /մլն մ^3/	Լցվածությունը առ 09.07.2018թ. /մլն մ^3/	Աճ/նվազում +/- /մլն մ^3/
1.	**Ախուրյան**	525.0	469	471	+2.0
2.	**Արփի լիճ**	105.0	50.4	48.1	-2.3
3.	**Կառնուտ**	22.60	12.26	17.55	+5.29
4.	**Սառնաղբյուր**	4.80	1.14	0.73	-0.41
5.	**Վարդաքար**	5.0	2.20	1.55	-0.65
6.	**Թավշուտ**	6.0	1.05	4.02	+2.97
7.	**Մանթաշ**	8.20	4.45	3.08	-1.37
8.	**Ջաջուռ**	0.28	0.18	0.22	+0.4
Ընդամենը		**151.88**	**71.68**	**75.25**	**+3.57**

Ջրամբարների լցվածության հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի: